

ԲԱԺԻՆ 1. ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

Մ եթողաբանական պարզաբանումներ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մարդահամարի արդյունքներով հաշվարկվում է բնակչության երկու կատեգորիա՝ առկա բնակչություն և մշտական բնակչություն:

Յուրաքանչյուր վարչական միավորի **առկա բնակչության** թվաքանակի ցուցանիշը ձևավորվել է ԼՂՀ 2015թ. մարդահամարի ժամանակ դրանում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և *ժամանակավոր ներկա* հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

Ժամանակավոր ներկա բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են մարդահամարի հաշվառման պահի դրությամբ տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն) կամ ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունում, մեկ տարուց պակաս ժամկետով գտնվող անձանց թվաքանակի ցուցանիշները, որոնց մշտական բնակավայրը տվյալ համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս է:

Յուրաքանչյուր վարչական միավորի **մշտական բնակչության** թվաքանակի ցուցանիշը ձևավորվել է մարդահամարի ժամանակ տվյալ տարածքում մշտապես (սովորաբար) բնակվող ու հաշվառման պահին ներկա և *ժամանակավոր բացակա* հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակների հանրագումարից:

Ժամանակավոր բացակա բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են տվյալ համայնքում՝ քաղաք, գյուղ, տուն (շինություն), մշտապես (սովորաբար) բնակվող, սակայն մարդահամարի հաշվառման պահի դրությամբ, տվյալ քաղաքային կամ գյուղական համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս՝ մեկ տարուց պակաս ժամկետով բացակայող անձանց թվաքանակի ցուցանիշները: